ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՆՅԱՆԻՆ

Ձերդ Սրբազնություն,

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի մահվան լուրը հասավ մեզ այսօր վաղ առավոտյան: Մեկ այլ առիթով մենք հնարավորություն կունենանք նշելու այն մեծ ծառայությունը, որ նա բերեց Հայ Առաքելական Եկեղեցուն և համաշխարհային էկումենիկ շարժմանը: Այսօր մենք ցավում ենք ամբողջ հայ ժողովրդի հետ, որովհետև Կաթողիկոսը միասնության և զորության խորհրդանիշ էր:

Հայտնում ենք Մեր ցավակցությունները Հայ Առաքելական Եկեղեցուն, եպիսկոպոսներին և հավատացյալ հայ ժողովրդին:

Էկումենիկ շարժման մասնակիցներս շատ պիտի զգանք այս ոգեշունչ հոգևորականի, գիտնականի, իմաստուն խորհրդականի հովվական մասնակցության կարիքը: Նրա վկայությունը խաղաղության թագավոր Հիսուսի Քրիստոսի, նրա կարեկցանքը պատերազմից, հալածանքից և զրկանքներից տառապող Աստծու բոլոր զավակների հանդեպ, անկախ նրանց ազգային պատկանելիությունից և դավանանքից, ներշնչման և քաջալերանքի աղբյուր էր ոչ միայն հայերի, այլև շատ այլ ազգերի համար:

Թող Աստված հանգստություն և մխիթարություն ուղարկի ձեզ բոլորիդ:

ԴՈԿՏՈՐ ԿՈՆՐԱԴ ՌԱՅԶԵՐ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ժնև, 18 օգոստոս 1994 թ.

* * *

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՆՅԱՆԻՆ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏԻՆ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբազնություն,

Խոր վշտով ընդունեցինք Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցու Գերագույն Առաջնորդ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Առաջինի մահվան լուրը:

Եվրոպական Եկեղեցիների Խորհուրդը յուրահատուկ ջերմ հարաբերություններ է ունեցել հանգուցյալ Հայրապետի հետ երկար տարիների ընթացքում: Կաթողիկոսի խորին մտահոգությունը հայ ժողովրդի բարօրության մա-

սին, պատմական այս ծանր ժամանակահատվածում, հույսի և քաջալերանքի աղբյուր էր: Եվրոպական Եկեղեցիների Խորհուրդը դեռ երկար կհիշի Նորին Սրբության Էկումենիկ հանձնառությունը և հոգևոր ներդրումը խաղաղության, արդարության և հաշտության գործում:

Կաթողիկոսի աջակցությունը հրադադարի, ադրբեջանական կոնֆլիկտի խաղաղ կարգավորման և գերիների փոխանակման գործում, Հայաստանին խաղաղություն և ապոփանք բերող նրա ջանքերը այն բազմաթիվ օրինակներից են, որոնց վկաներն ենք մենք՝ նրա այսօրվա գործակիցներս:

Եվրոպական Եկեղեցիների Խորհուրդը իր ցավակցությունն է հայտնում հայ ժողովրդին իր հոգևոր մեծ առաջնորդի կորստյան համար և աղոթում Տիրոջը, որ սեր և գթություն առաքի Ձեզ այս ծանր պահին:

Եվրոպական Եկեղեցիների Խորհրդի Կենտրոնական Կոմիտեի և նրա նախագահ քահանա Ջոն Առնոլդի անունից հայտնում ենք Ձեզ մեր վշտակցությունը և միջնորդական աղոթքները:

ԺԱՆ ՖԻՇԵՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ժնև, 19 օգոստոս 1994 թ.

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ՎԱՍԵՄԱՇՈՒՔ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ,
ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Երևան

Վսեմաշուք տիար Նախագահ,

Ընդունեցեք իմ, Հայ Կաթողիկե Պատրիարքությանս և իր թեմերուն ցավակցության խոր արտահայտությունները Վազգեն Առաջին Վեհափառ Հայրապետին վախճանման առթիվ: Անձերը կանցնին, հաստատությունները կմընան:

Թող Աստված հավիտյան պահե Հայոց Եկեղեցին և անոր մեծագույն թիկունքը հանդիսացող Հայոց նորանկախ Հանրապետությունը:

Այս ցավագին պարագային, կնորոգենք մեր Հայ Կաթողիկե նվիրապետության անսակարկ կառչածությունը հայրենի պետության և անոր արժանավոր պետին: Աստված անվտանգ պահե զինք ու իր կառավարած երկիրը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԵՏՐՈՍ ԺԸ
ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ